Արձանագրություն N 2

**ԴԱՀԿ-ԳՀԱՊՁԲ-17/1/8Ա** ծածկագրով **<գնանշման հարցում>** գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 27 նոյեմբերի 2017թ
ժամը՝ 14:00

Մասնակցում էին հանձնաժողովի՝

Նախագահ՝ Արթուր Սաֆարյան

անդամներ՝ Ալեքսանդր Խաչատրյան, Տաթևիկ Լևոնյան,

քարտուղար՝ Դավիթ Պետրոսյան

I. Հայտերի բացման մասին

(Արթուր Սաֆարյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

ա) սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| N | Մասնակցի անվանումը | ՀՎՀՀ | Մասնակցի հետ կապի միջոցը |
|---|---|---|---|
| 1 | **<Լեմուր> ՍՊԸ** | **00899289** | lemur.armenia@gmail.com |
| 2 | **<Օմնիա> ՍՊԸ** | **03543207** | omniallc.arm@gmail.com |
| 3 | **<ԴԻՎԻ ԳՐՈՒՊ> ՍՊԸ** | **01401885** | info@dvgroup.am |

բ/ հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել.

գ/ Մասնակիցների կողմից առաջարկված գները ներկայացված են հավելվածում.

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

II. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների մասին

(Արթուր Սաֆարյան)

2. Ընդունել ի գիտություն, որ

ա/ **<ԴԻՎԻ ԳՐՈՒՊ> ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտի փաստաթղթերում էլեկտրոնային թվային ստորագրությունը արտատպված չէ, որը հրավերի 8.19 կետով սահմանված պահանջ է

բ/**<Օմնիա> ՍՊԸ**-ի ներկայացրած հայտի փաստաթղթերը վավերացված են Ստեփան Աղյանի կողմից, ով լիազորված է **<Օմնիա> ՍՊԸ** -ի տնօրեն Ա.Խաչատրյանի կողմից, սակայն լիազորագրի պատճեն կցված է N1 հավելվածին որպես մեկ փաստաթուղթ և այդ փաստաթուղթը էլեկտրոնային թվային ստորագրությամբ վավերացված է Ստեփան Աղյանի կողմից

գ/**<Լեմուր> ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտում գնային առաջարկի փաստաթուղթը կցված չէ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

3. Հիմք ընդունելով հայտերի գնահատման արդյունքները՝ գնահատող հանձնաժողովը որոշեց.

ա/ **<ԴԻՎԻ ԳՐՈՒՊ> ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտը մերժել

բ/**<Լեմուր> ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտը մերժել

գ/**<Օմնիա> ՍՊԸ**-ին առաջարկել ծանուցվելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 05.12.2017թ. ժամը 10:00-ն) հրավերով սահմանված կարգով շտկել ստորագրության հետ կապված անհամապատասխանությունը՝ լիազորագիրը ներկայացնել Ա.Խաչատրյանի կողմից էլեկտրոնային թվային ստորագրությամբ վավերացված

դ/ **<Օմնիա> ՍՊԸ**-ի՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 43-րդ կետի 3-րդ մասով նախատեսված տվյալների ճշտման համար կատարել ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում

ե/ միաժամանակ **<Օմնիա> ՍՊԸ-ին** առաջարկել ներկայացնել 1-ին տեղ զբաղեցնելու դեպքում հրավերով սահմանված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ ........................ Ա.Սաֆարյան

անդամներ ........................ Ա. Խաչատրյան

........................ Տ. Ալոնյան

քարտուղար ........................ Դ.Պետրոսյան

Հավելված 1
« ԴԱՀԿ-ԳՀԱՊՁԲ-17/1/8Ա » ծածկագրով
գնանշման հարցում գնման ընթացակարգի նիստի
արձանագրության

## Մասնակիցների կողմից առաջարկած գները

| Ապրանքի | | | | Մասնակիցների անվանումները և առաջարկած գները ըստ չափաբաժինների, առանց ԱԱՀ-ի (ՀՀ դրամ) | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/Հ | անվանումը | Չափի միավորը | Քանակը | <Օմնիա> ՍՊԸ | <Լեմուր> ՍՊԸ | <Դիվի ԳՐՈՒՊ> ՍՊԸ* | | | | Նախահաշվային գինը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| 1 | Մատնահետք կարդացող սարք | հատ | 10 | 968000 | - | 491500 | | | | 1000000 |

*Մասնակիցը հանդիսանում է ԱԱՀ վճարող: